600.0371.29.11.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2016 թվականի №371Ա
քաղ. Երևան

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՉԱԳԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) 2010 թվականի դեկտեմբերի 28-ի «Անհատ ձեռնարկատեր Վաչագան Ավետիսյանին ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №757Ա որոշմամբ անհատ ձեռնարկատեր Վաչագան Ավետիսյանին (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) տրամադրվել է ռադիոհաճախականությունների օգտագործման №0896 թույլտվությունը,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 17.1-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարը սահմանվում է տարվա համար և ենթակա է վճարման յուրաքանչյուր եռամսյակի համար հավասարաչափ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ, իսկ 10-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների գումարների վճարումն օրենքով սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում գանձվում է տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար,

գ) անհատ ձեռնարկատերը չի վճարել ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարները, ինչի մասին բազմիցս տեղեկացվել է, այդ թվում՝ հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 4-ի №ԱԲ-544Հ, հուլիսի 6-ի №ԱԲ-1373Հ և հոկտեմբերի 5-ի №ԱԲ-1950Հ գրություններով,

դ) անհատ ձեռնարկատիրոջ կողմից օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջների խախտման՝ ռադիոհաճախականությունների օգտագործման վճարների չվճարման փաստի ուսումնասիրության նպատակով 2016 թվականի նոյեմբերի 1-ին հանձնաժողովը վերջինիս

նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի մասին ծանուցել է 2016 թվականի նոյեմբերի 1-ի №ԱԲ-2125Հ գրությամբ,

ե) անհատ ձեռնարկատերը հարուցված վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի կապակցությամբ որևէ փաստարկ կամ հիմնավորում չի ներկայացրել,

զ) հանձնաժողովի աշխատակազմի կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ անհատ ձեռնարկատերը խախտել է օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջները և մինչ օրս չի կատարել ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժի վճարման պարտավորությունը, որը 2016 թվականի նոյեմբերի 29-ի դրությամբ կազմում է երկու հարյուր տասներկու հազար չորս հարյուր չորս դրամ, որից հարյուր քսան հազար հինգ հարյուր ութսուն դրամ գումարի մասով (հաշվարկված՝ 2012 թվականի հունվարի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը) առկա է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե գումարի փոխանցումը պարտավորեցնելու մասին հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 14-ի №8Ա որոշում, որը գտնվում է հարկադիր կատարման փուլում,

է) 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի նոյեմբերի 29-ի դրությամբ ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժի վճարման՝ անհատ ձեռնարկատիրոջ պարտավորությունը կազմում է իննսունմեկ հազար ութ հարյուր քսանչորս դրամ, որից հիսուներկու հազար հինգ հարյուր դրամը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարն է, իսկ երեսունինը հազար երեք հարյուր քսանչորս դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը, և՝

հիմք ընդունելով օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, 17.1-րդ հոդվածի 11-րդ մասը՝ հանձնաժողովը **որոշում է.**

1. Անհատ ձեռնարկատիրոջը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել №0896 թույլտվությամբ նախատեսված ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների մասով 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի նոյեմբերի 29-ը հաշվարկված իննսունմեկ հազար ութ հարյուր քսանչորս դրամ պարտքը, որից հիսուներկու հազար հինգ հարյուր դրամը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարն է, իսկ երեսունինը հազար երեք հարյուր քսանչորս դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:
2. Ընդունել ի գիտություն, որ անհատ ձեռնարկատերն իրավասու է՝

   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել հանձնաժողովին՝ վերանայելու այն.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատիրոջն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
29 նոյեմբերի 2016թ.